

ՄԱՂԹԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐԴԱՅՈՒԱԾ ՃԱՌԸ

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

Եթէ ի հնումն օրինադրեալ էր Իսրայէլեան տոհմին ըստ Գաւթայ յուրախութիւն եւ ի ցնծութիւն «Փող հարկանել ի զլուխ ամսոց աւուր նշանաւորի», բանի՛ առաւել ի դէպ զայ մեզ այսօր նոյնօրինակ եւ զեր բան զայն ցնծութեամբ կատարել եւ նուագօր երգոց զրուստել զայս օր, որ մի է ի նշանաւորաց աւուրց մերոյ յիշատակի մեծի շնորհի եւ պարգեւաց Աստուածպետական Տեսչութեան, զոր արար մեզ շնորհելով զՏէրոյ մեր զլուխ Եկեղեցւոյ, Հովուապետ մեծ բանաւոր հօտին Քրիստոսի եւ Հայր խնամող տառապեալ որդւոցն Հայաստանի: Արդանք ետես Հայաստան յետ Սրբոյն Գրիգորի արժանաւոր ժառանգ Առաքելական Գահու. ետես եւ համբուրեաց Հովիւս քաջ անձնաղիր եւ հաւատարիմ, եւ ի նոցունց բազումք ստացան զմեծութիւն երախտադէտ զգացմանց ժողովրդոց յիշատակաց արժանի արդեամբք. ետես ասեմ, եւ ի նոսին առաւելեալ ճիշմարիտ զործովք միսիմարութեան վշտացելոց եւ պայծառափայլս զործելոյ զԱզգս մեր ամենատեսակ փառօր զմեծն Ներսէս ասեմ եւ զնմանիսն նորին, որ ի սէր Հայրենեաց եւ ի խնամս հայրենի որդւոց նուիրական կենօր սրտնչացան. բայց Դու, Հովուապետ մեծ, նկատմամբ պարսպայից ժամանակիս, չսխալեմ եմէ ասացից, առաւել եղեր եւ անցուցեր զամենեւրումք: Եւ ոչ վայրասլար են եւ մտացածին ինչ զոր զգամբս. վասն զի եմէ երանաշնորհքն այնորիկ սրանչելի երեւեցան ի զործս եւ անմահացան արդեամբք, շնորհ մեծ էր ժամանակին, որոց ի միոյ կողմանէ Արշակունեան հզօր թագաւորութիւն Հայոց աջակից գոհներ, եւ ի միւսոյ կողմանէ ճոխութիւնք նախարարաց եւ իշխանաց օժանդակէր. իսկ Դուք, Աստուածարեալ Տէր, որ յայնչափ բարիս փառաւորել ճիշմարէր զազգ մեր, ոչ են ջեղ աւըններ Պետութիւնք հզօր, այլ Ազգութիւն անգոր. ոչ պերճացելոց փառք իշխանաց ձեռնտուութիւն, այլ միաբանութեան մերոյ անձնանուէր հնազանդութիւն: Ո՛չ եւթ ջեղ զործակից, այլ յոյսն միայն միայնակ ի ջեղ զօրացեալ. եւ այսպէս ի հարկաւորեալ հանգամանաց վրիպեալ ժամանակիս, զահակալէր ուրախութեամբ, հովուէր հաւատարմութեամբ, եւ խնամէր զՊոպ զորդիս Մօրս Լուսոյ, զրկեալս ի զեղեցիկ կամանէ Հոգւոյն, եւ

զործէր տընողական եւ անխոնջ վաստակօր զօգուտն ըստ իրաւանց եւ պարտուց. այս է զործ մեծ, որով առաւելօր զամենեւրումք զգեղեցիկ պտուղս Հովուական արդեանց, Աստուածարեալ Տէր, բազմք է մեզ յիշել ի սերկեանս աւուր, յսրում Տէր յերկնից այց արարեալ տառապելոցս շնորհեաց մեզ զՀայրապետոյ մեծ: Հապա եւ մեր այս ծիր երկնային, Սրբազումար Հայրք, պաշտելով սրտի մտօր այսօր, բազկատարած մաղթեսցուք առ բարձրեալն Աստուած, զի նորոգեսցէ զսա միշտ ի կենդանութեան ընդ երկայն աւուրս ծաղկեալ Աստուածահաճոյ եւ Ազգասիրական զործովք ի միսիմարութիւն Մօրս Լուսոյ եւ լրութեան Աղբիս:

Ուրարակիր Գրիգոր Մատթէոսեան

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆԸ ԿԱՐԴԱՅՈՒԱԾ ՃԱՌԸ:

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ԵՒ ՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Հոգանդի վրայ լուսաւորեալ ազգերի համեմատաբար յառաջադիմութեանց օր ըստ օրէ ծաղկելու զլիաւոր պատճառն ո՛վ կարող է երկբայել, որ նոցա կարգաւորեալ ուսումնարաններն են եղած, որոնք մարդկային ազգի համար մատակարարել են այնպիսի հոգեկան սնունդ, որոնց միջոցով մարդս կապվում է իւր խղճի, իւր ընկերաց եւ իւր Ստեղծողի հետ:

Ո՛վ կարող է կասկածել իւր սրտում որ, եւ այս ուսումնարանների ծաղկելն ժամանակի պտուղն է եղել, որոյ ճշմարտութիւնը ահա երեւելի դիտնականներից մինը բարձրաձայն քարոզում է. «Ժամանակի պտուղն կծնանի իւր ժամանակին».

Աներկբայելի՛ ճշմարտութիւն . . .

Ժամանակը չէ, որ անթիւ կոշտ եւ բիրտ ազգերը, որ երբեմն տգիտութեան մէջ ընկղմած լուսաւորութեան ճառագայթներից հեռի էին, այժմ գիտութեանց աղբիւրներ են դառել: Ժամանակին չեն պարտական այն լուսաւոր ժողովուրդներն, որոց մտաց մէջ զանազան դարերում այնպիսի ազգաշահ զաղափարներ են ծագել, որոց պտուղն այժմ ամբողջ Եւրոպայ բախտաւորապէս վայելում է: Ժամանակի անխը չէ եղել, որ, նոցա կենաց շրջանը յառաջադէմ քայլերով ապահովացել է:

Ո՛հ նախանձելի բախտաւորութիւն . . .